

քին մէջ ներկայացուած կը գտնուի, և կը կարծուի՝ իբր դաշինկ տնտեսութեան: Արդ այս դաշինքը կրկնակ գերեզմանի մը խորհրդապատկերին վրայ գնելով՝ չի՞ թուիր նշանակել թէ ընկերակցութիւնը եւ փոխադարձ հաւատարմութիւնը տեւած են մինչեւ գերեզման:

Բանախօսը իր այս խիստ շահեկան նկարագրութենէն յետոյ կը պատմէ թէ շատ մը պրպտումներէն յետոյ նոյն եկեղեցիին դասին մէջտեղը, 18 մարտ 1889ին, վեց աստիճանով հողին տակ գտնուած է սենեակ մը, որուն մէջ նշմարուած են նկարներ, աւնոր բարձրութիւնն է 3 մ., 60, լայնութիւն՝ 4 մ., 90, երկարութիւնը՝ 5 մ., 60. ըստ բացատրութեան և համոզման բանախօսին, այս նկուղ սենեակը կը թուի ըլլալ Ս. Յովակիմ-Աննայի գերեզմանը զոր յայտնապէս կը յիշատակեն բազմաթիւ ուղեգիրներ: Ըստ իս, եթէ այս նորագիւտ գերեզմանը Ս. Յովակիմ-Աննայի գերեզմանը նկատուի իսկ, չէ կարելի սակայն, հերքել Գեթսեմանիի Ս. Աստուածածնի տաճարին մէջ գտնուած յիշեալներու գերեզմանները. նկատելով որ վերջիններս հին քրիստոնէից կողմէ Ս. Կուսի ծնողաց ի պատիւ հաստատուած աւանդական յիշատակարաններ կրնան նկատուիլ, և կամ թերեւս անցեալ դարերու մէջ տեղի ունեցած և մեզ անծանօթ փոփոխութիւններու և բարեպաշտական անհրաժեշտութիւններու հետեւանքով Գեթսեմանիի տաճարին մէջ հաստատուած են նոյն գերեզմանները: Այս մասին կը կարծեմ թէ չէ կարելի վճռապէս խօսիլ:

### 3. Ս. Յովակիմ-Աննայի եկեղեցւոյն հայկական յիշատակները.

Ս. Աննայի եկեղեցւոյն ու վանքին գոյութեան պատմական և նկարագրական այս ընդարձակ տողերէն յետոյ այժմ փութանք սոյն եկեղեցւոյն հայկական ըլլալը հաստատել: Մենք ունինք մեր ձեռքը հաստատուն և վաղեմի յիշատակարան մը՝ որ է Հայոց Անաստաս վարդապետին վանօրէից ցուցակը, «Վասն վանօրէից որ ի Ս. քաղաքն Երուսաղէմ» խորագրով: Նոյն զբուածքին մէջ յիշատակուած Հայոց 72 վանքերուն մէջ, մասնաւորապէս կը յիշուի Պրոպատիկէի եկեղեցին ու վանքը, «Եւ ի